Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2024 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 1010 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Սպիտակ համայնքի ղեկավարի շախմատի առաջնություն-2024» մրցաշարի անցկացման

Անցկացման վայրը՝ «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ, Ս. Ավետիսյան 1

Ժամկետները՝ նոյեմբերի 17-ից 24-ը

Շվեյցարական մրցակարգով 8 խաղափուլ:

Ժամանակացույցը՝ 45 րոպե, յուրաքանչյուր կողմին +3 վարկյան յուրաքանչյուր քայլի համար:

Վիճակահանությունը կատարվելու է swiss-manager ծրագրով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ.

1. Զոնեբորն-Բերգերի գործակիցների,
2. Սև գույնի ֆիգուրներով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
3. Անձնական հանդիպման արդյունքի,
4. Հաղթանակների առավելագույն քանակի:

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը՝ 30 րոպե տուրի սկզբից:

Հաղթանակի համար կտրվի 1 միավոր, ոչ ոքիի դեպքում 0,5 միավոր, պարտության դեպքում 0 միավոր:

Անհրաժեշտության դեպքում մրցաշարի ընթացքում գյուղաբնակ մասնակիցների տեղափոխումը կկազմակերպի Սպիտակի համայնքապետարանը:

Բոլոր մասնակիցները կարող են պարգևատրվել միայնակ 1 անվանակարգում:

Մրցաշարի բացման արարողությունը՝ ***նոյեմբերի 17-ին ժամը 17:30:***

Մասնակցության իրավունք ունեն՝

- 18 տարին լրացած (մինչև 2006 թվականի ծնվածները) Սպիտակ համայնքում հաշվառված և փաստացի բնակվող բնակիչները:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	17.11.2024	***Բացման արարողություն***	***17:30***
1	17.11.2024	1-ին խաղափուլ	18:30
2	18.11.2024	2-րդ խաղափուլ	18:30
3	19.11.2024	3-րդ խաղափուլ	18:30
4	20.11.2024	4-րդ խաղափուլ	18:30
5	21.11.2024	5-րդ խաղափուլ	18:30
6	22.11.2024	6-րդ խաղափուլ	18:30
7	23.11.2024	7-րդ խաղափուլ	18:30
8	24.11.2024	8-րդ խաղափուլ	15:30
	24.11.2024	***Փակման արարողություն***	18:00

Հայտերը ներկայացնել Սպիտակի համայնքապետարան (հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7), աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժին, 3-րդ հարկ, 309 սենյակ, իսկ գյուղական բնակավայրերի բնակիչները կարող են դիմել իրենց բնակավայրերի վարչական կենտրոններ, մինչև ***նոյեմբերի 15-ը ժամը 18:00***:

Ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվելու:

Մրցանակներ.

1-ին տեղ՝ 120 000 ՀՀ դրամ + մեդալ, գավաթ

2-րդ տեղ՝ 100 000 ՀՀ դրամ + մեդալ,

3-րդ տեղ՝ 80 000 ՀՀ դրամ + մեդալ:

Մրցանակակիրները կպարգևատրվեն նաև պատվոգրերով:

Կպարգևատրվեն նաև 50+ (մինչև 1974 թվականի ծնվածները) տարիքի լավագույն 3 արդյունք ցույց տված շախմատիստները,

Մրցանակներ.

1-ին տեղ՝ 40 000 ՀՀ դրամ + մեդալ,

2-րդ տեղ՝ 30 000 ՀՀ դրամ + մեդալ,

3-րդ տեղ՝ 20 000 ՀՀ դրամ + մեդալ:

Մրցանակակիրները կպարգևատրվեն նաև պատվոգրերով:

Գլխավոր մրցավար՝	Վրեժ Սահակյան
Հարցերի դեպքում զանգահարել՝	0255 (2-25-00)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

Ձև 1

ՀԱՅՏ

№	Մասնակցի անուն, ազգանուն, հայրանուն	Ծննդյան օր, ամիս, ամսաթիվ	Բնակության վայր	Կարգ	Վարկանիշ (եթե առկա է)	Հեռախոսահամար
1.						

Մասնակից՝ _____

(անուն ազգանուն ստորագրություն)

«_____»_____2024թ.